



ՆԱՅԱՍԱԾՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԱԳԲԱՆՆԵՐԻ ՊԱԿԱՏ

0010, ՆՆ, ք. Երևան, Զարյան 7-2
Նեո.՝ (+374 10) 600 701, 600 704
Նեոպարճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 01/04/ 401 -20

« 11 » 03 2020թ.

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ պարոն Նիկոլ Փաշինյանին

Հարգելի պարոն Փաշինյան,

Կորոնավիրուսի հետ կապված քաղաքացիների և աշխատակազմի առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.02.2020թ. թիվ 43-Ա հրամանի համաձայն՝

1. Պալատի վարչական շենքի և մարզային գրասենյակների տեսանելի վայրերում տեղադրվել է առողջապահության նախարարության հրապարակած «Ինչպե՞ս պաշտպանվել կորոնավիրուսից» տեղեկատվական թերթիկները:
2. Պալատի վարչական շենքում և մարզային գրասենյակներում՝ աշխատակիցների համար ապահովվել է ալկոհոլային հիմքով կամ այլ համարժեք ախտահանիչներ:
3. Քաղաքացիների հետ շփվող Պալատի աշխատակիցներն ապահովվել են բժշկական դիմակներով:
4. Իրականացվել են իրավիճակից բխող այլ գործողություններ, այդ թվում՝
 - խստացվել է տարածքների մաքրության նկատմամբ հսկողությունը,
 - ՀՊԳ ընդունարանի պատասխանատուների սեղանին տեղադրվել են թափանցիկ պատնեշներ:

Հրամանով ստեղծվել է նաև պատասխանատու ժամանակավոր խումբ:

Նույն օրը՝ 2020 թվականի փետրվարի 28-ին, դիմել եմ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին, խնդրելով՝

- տրամադրել կորոնավիրուսից պաշտպանող առնվազն 200 դիմակ.
- **իրազեկել, թե ի՞նչ պաշտպանիչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել վիրուսով վարակման վտանգը նվազեցնելու համար:**

Դիմումում մատնանշվել է այն հանգամանքը, որ ՀՀ փաստաբանների պալատը հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով կազմակերպում է քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ինչով պայմանավորված յուրաքանչյուր օր ընդունում է բազմաթիվ քաղաքացիների:

11.03.2020թ. ՀՀ փաստաբանների պալատը ստացել է ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի պատասխան գրությունը, որում **նախարարությունը նշել է միայն, որ բժշկական դիմակներ տրամադրել չի կարող:**

Առողջապահության նախարարությունը **չի պատասխանել այն հարցին**, թե ի՞նչ պաշտպանիչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել վիրուսով վարակման վտանգը նվազեցնելու համար:

Գրություն ուղղելով առողջապահության նախարարությանն՝ ակնկալում էինք, որ նախարարությունն օպերատիվ կարգով գրությամբ կամ առնվազն մասնագետի միջոցով խորհուրդներ կտա, թե ի՞նչ միջոցառումներ պետք է իրականացնել քաղաքացիների մեծ հոսք ունեցող կազմակերպությունում՝ վտանգը նվազեցնելու համար:

Ցավով պետք է արձանագրեմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունը լուրջ չի վերաբերվում այս խնդրին:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ առողջապահության նախարարին՝ քաղաքացիների մեծ հոսք ունեցող կազմակերպություններում կամ մարմիններում իրազեկման աշխատանքներ իրականացնելու կապակցությամբ:

Հ.Գ. Սույն գրությունը հրապարակում ենք հաշվի առնելով հարցի կարևորությունը:

Առդիր՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.02.2020թ. հրամանի պատճենը,
2. ՀՀ փաստաբանների պալատի 28.02.2020թ. գրության պատճենը,
3. ՀՀ առողջապահության նախարարության պատասխանի պատճենը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Ջոհրաբյան